



ՇՆՈՐՀԱՒՈՐ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԲԱՐՈՎ ՀԱՍՆԻՆԷ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն: Ուրախութեան ու զուարճութեան օր:

Բուն Բարեկենդանին օրը Մեծ Պահքին նախորդող Կիրակին է:

Բարեկենդանը այնքան սիրուած, ժողովրդային սպասուած տօն է, որ հայ ազգին կողմէ կ'ընկալուի որպէս երջանկաբեր, ճոխ խրախճանքներով ու առատ ուտելիքներով վայելելու տօն, ինչպէս նաեւ պարելու, խաղալու, թատերախաղերու, այցելութիւններու եւ ուրախութեան շրջան:


Այս սովորութիւնը սկսած է միջին դարերուն: Այս կարճ շրջանին մարդիկ իրաւունք ունին ծպտուելու ծածկելով իրենց դէմքը, որպէսզի մէկը զիրենք չճանչնայ:

Ժամանակին այդ օրը փոքրիկները չափահասներու կը վերածուէին, ծառաները՝ տերերու... բոլոր ծայրայեղութիւնները արտօնուած էին, որովհետեւ անոր պիտի հետեւէին Մեծ Պահքի քառասուն օրերը: Այդ քառասուն օրերուն ընթացքին, վերոյիշելով Յիսուսի անապատին մէջ անցուցած աղօթքի եւ պահքի քառասուն օրերը, քրիստոնէաները պահք կը պահէն:




Թիւ 7
ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ
ՓԵՏՐՈՒԱՐ, Գ. 2023

Կրնա՞ս գուշակել ճիշդ պատասխանը:





Չատակալ: 4


Միացո՛ւր պատկերները համապատասխան շուքերուն:



Թու՛ւ՛ բանջարեղենները եւ արձանագրե՛ իւրաքանչիւրին թիւը:



Գունաւորե՛ հետեւեալ պատկերը թիւերուն համաձայն, ստորեւ որոշուած գոյներով:



- 1 -
- 2 -
- 3 -
- 4 -

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Օր մը ոսկի վզնոց մը կը կորսուի հարուստ մեծաւորի մը տունէն: Այդ տան մէջ կ'աշխատէին քանի մը ծառայ: Բնականաբար, կ'ենթադրուի, թէ ծառաներէն մէկն է վզնոցը գողցողը: Անոնց իրաքանչիւրին կը հարցուի, բայց ոչ ոք կը խոստովանի:

Այսպիսով, տանտէրը բողոք կը ներկայացնէ դատաւորին ու բոլոր ծառաները կը կանչուին դատարան: Երկա՛ր հարց ու փորձերէ ետք, դարձեալ ծառաներէն ոչ մէկը կը խոստովանի:

Այնուհետեւ դատաւորը միտք մը կը յղանայ: Ծառաներէն իրաքանչիւրին կու տայ նոյն հասակը ունեցող փայտ մը եւ կը խնդրէ անոնցմէ որ յաջորդ օրը

անոնք իրենց հետ դատարան բերեն: Անոնց կ'ըսէ՛ նաեւ, որ վզնոցը գողցողին փայտը մէկ թիզ պիտի երկարի:

Երբ անոնք կը վերադառնան տուն, իրենց փայտերը կը ձգեն այնպէս, ինչպէս որ են: Միայն այն ծառան, որ վզնոցը գողցեր էր, փայտը մէկ թիզ կը տաշէ...

Յաջորդ օր, երբ բոլորը կը յանձնեն իրենց ձօղիկները, կը պարզուի, որ մէկ փայտը միւսներէն մէկ թիզ կարճ էր: Այսպիսով՝ գողը կը յայտնուի եւ յարմար պատիժ կը ստանայ:

Այս պատմութենէն կը հասկնանք՝ որ ճշմարտութիւնը միշտ կը բացայայտուի:



ՍԵՐԻՆՈՍ

Տնային դեղձանիկ թռչունին վայրի տարբերակը՝ սերինոս թռչնակն է, որ կը բնակի Ատլանտեան ովկիանոսի Քանարեան կղզիներուն մէջ:

Մօտ հինգ հարիւր տարի առաջ մարդիկ կ'ընտելացնէն այս երգող թռչուններու տեսակը եւ այժմ կը պահեն զանոնք որպէս ձեռնասուններ:

Դեղին, նարնջագոյն, սպիտակ, գոյնզգոյն եւ կամ ալ միագոյն դեղձանիկները, բոլորն ալ իսկապէս շատ հաճելի մեղեդային ձայն ունին եւ այս բոլորին առաւել, զանոնք ինամելը բնաւ դժուարութիւն չի պատճառէր:

